բեղ աւադերէց Հայրապետանոցին։ Եւ յետ բաղում խնդիր լինելոյ, ժողով չրջակայ եպիսկոպոսաց զկնաւ 'ի խնդիր ժողովրդեան եւ ընտրեաց զԿիւրեղ իբրեւ արժանի ժառանգ այնր աթոռոյ, որում հաւան գտան առ հասարակ ամենեքեան։

Քանզի երանելին Կիւրեղ՝ որ յառաջն զզուչութիւն ինն ցուցանէր 'ի կշտամբել զհերձուածս ժամանակին, յետ նստելոյ յաթոռ Հայրապետութեան՝ առաւել համարձակ և անպատրուակ յանդիմանէր և յաղթահարէր զնոսա, և զբազումս 'ի մոլորելոց դարձուցանէր 'ի ճշմարիտ հաւատս ուղղափառութեան։

Եւ յաւել Տէր շնորհել Ս. Հայրապետին Կիւրղի լինել Հայր բազմութեան նոր հաւատացելոց 'ի ձեռն աշխարհաքարող սքանչելեաց երեւման Սրբոյ Խաչին յԵրուսաղէմ։ Քանզի յառաջնում ամի անդ Հայրապետութեան նորա, կամ 'ի սկիզբն երկրորդին (351 կամ 352) յեօթներորդ աւուր ամսեանն Մայիսի յերրորդ ժամու աւուրն՝ երեւեցաւ յերկինս Խաչ մեծ հրաշալի լուսեղէն, որ յաղթէր պայծառութեամբ ճառագայթից արեգական տարածեալ 'ի վերայ սրբոյ լերինն Գողգոթայի, եւ ձգեալ մինչեւ 'ի լեառն Ձիթենեաց, գեղեցիկ եւ սքանչելի յոյժ պատեալ շուրջանակի պսակաձեւ նշուլիւք իբրեւ զծիածան։ Դղրդեցաւ քաղաքն ամենայն և հիացեալ կային ընդ սքանչելի տեսիլ Սրբոյ Խաչին։ Եւ ապա ամենայն բազմութիւն տեսողաց ընթացան յեկեղեցին և բազումք յանհաւատից եկին 'ի հաւատս Քրիստոսի, և հրահանգեալ 'ի սրբոյն Կիւրղէ մկրտեցան 'ի նմանէ և 'ի պաշտօնէից նորա։ Աւաղանն յոր մկրտեաց Ս. Կիւրեղ զբազմութիւն նորադարձ հաւատացելոց, պահի աւանդութեամբ 'ի տաճարի Ս. Յակոբայ զկնի ժամանակաց բերեալ 'ի Սիոնէ, և եդեալ կայ 'ի ներքոյ սեղանի նուիրեալ յանուն Ս. Կիւրղի։

Իսկ Ս. Հայրապետն Կիւրեղ ականատես վկայ սքանչելեացն՝ փութացաւ գրեաց գիր առ Կոստանդիոս կայսր, քարոզելով զմեծութիւն ահաւոր հրաշիցն, կոչելով զնա Աստուածասէր և բարեպաշտ, թէ և գիտէր զնա զոլ արիոսական։ Այս թուղթ Ս. Կիւրղի վերծանի յեկեղեցիս Հայոց յաւուր ոօնի Երեւման Խաչի։